ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2021 թվականի N 01

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐՏԵԶՈՒՄ ԱՆՎԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լերմոնտովո համայնքի Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 13/05/1991 թ-ի թիվ 4 որոշման մեջ և Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականում կատարել փոփոխություն/ուղղում/՝ "Տատյանա Մակլաշովա"-յի փոխարեն գրել "Տատյանա Մակշանովա":

2.Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ ԿԱԱԳՊԿ-ի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2021 թվականի N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.12.2020թ. թիվ 01/107.4/11994-2020 գրությունը և 11.12.2020 թ-ի թիվ 1074-Ա որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել "Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների" պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

3.Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Լերմոնտովո համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2021 թվականի N 03-Ն

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ "Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի ավագանու 22/01/2021 թ-ի "Լերմոնտովո համայնքի 2020 թ-ի դեկտեմբերի 25-ի "Լերմոնտովո համայնքի 2021 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 2-ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լերմոնտովո համայնքի 2021 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

2.Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2021 թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2021 թվականի N 04

ՀՀ ԼՄ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2021 Թ-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թ-ի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաաստատել Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2021 թ-ի ամենամսյա արձակուրդների տրամադրման հերթականությունը /նախնական գրաֆիկը/.

Չախալյան Էդիկ՝ համայնքի ղեկավար – հուլիս

Հարությունյան Անահիտ՝ աշխատակազմի քարտուղար - օգոստոս

2.Սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի վերոհիշյան աշխատակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**